ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՄԱՄԻԿՈՆՅԱՆ-ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՏՈՀՄԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XII—XIII ԴԱՐԵՐՈՒՄ» ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Երևանի «Լրաբեր հասարակական գիտություններիս» 1968 թիվ 3-ի մեջ Ա. Շահինյան ստորագրությամբ երևցավ գրություն մը «Մամիկոնյան-Համապասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում» խորագրով (էջ 84—93)։ Տրված աշխատությունը, որ «Լրաբերին» 10 էջերը կը գրավե, կու տա մեզի լոկ մեկ հիշատակարան, որ նյութին համար նորություն մըն է, առանց սակայն արդեն գիտցվածին մասին շատ բան ավելցնելու։ Դժբախտաբար լուսանկարներն իսկ (երեք հատ) անբավարար են։

Մամիկոնյան-Համաղասպյան տոհմը, որմով զբաղողները ավելի հարմար սեպած են Դսեղի Մամիկոնյաններ կոչել, տոհմ մըն է որ ոչ թե ԺԲ—ԺԴ դարերուն ընթացքին, այլ ԺԲ—ԺԴ դարերուն ընթացքին գոյություն ունեցած է և գործած։ Ինքս ալ գրած եմ մենագրություն մը որ նախ հրատարակեցի «Բազմավեպի» մեջ և հետո ալ ամբողջացնելով և նոր նյութերով հրատարակեցի Անթիլիասի «ՀԱՍԿ» պարբերականին մեջ 1964-ին և անկե ալ առանձնատիպ (24 էջ)։ Հոն հարկ եղած տվյալներով կարելի մանրամասնությամբ խոսած ենք այս տոհմին մասին։ Զարմանալիորեն մեր գրությունը անծանոթ մնացեր է Շահինյանի։ Շահինյանի հրատարակած երկու խաչքարերու հիշատակարաններեն 1215 թվականինը արդեն մեծ ձեռնահասությամբ հրատարակած էր վաստակավոր Կարո Դոֆթադարյան, 1957-ին, «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները», Երևան։ Շահինյան իբր երկրորդ խաչքարի հիշատակարան մեզի կու տա նորահայտ հիշատակարանս.

Թիին։ ՈԾ (1201) եր.
Մ[ուր]բ Սարգի[ս]
Ս[ս] Աղուտս դուստ-
ր Նաջմադինին, ամուս-
ին Սարդսի եւ մայր
Մամնային
ի նացա պակասմանն տո-
ւոք ի Սանահինն նաց-
ա հոգոյն զԱբլասադ-
անց ամեն շահ ու զենով
եւ։ ԻԵ։ (25) աւրավար հող. հրամ-
անաւ Մեծին Զաքարիայի

եւ կամաւորութ նամ՝բ փեսայ-
ին իմ Միրիանայ եւ կնոջ
իւր Ռուզուքանա. զխաչս
կանգնեցաք, նզովաւք

փակեցաք, որ մարդ ի սացա դուռն չգա դատի Սանահնին ծառաութենէ։ Ով դայս խափանէ յԱ[ստուծոյ]յ եւ յԱ[ստուածա] ծնեսս նզոված է։

Հիշատակարանս արդարև կը ցուցնե որ Սարգիս (Ա) մահացած էր 1201-ին։ Ըստ այս հիշատակարանին Սարգսի (Ա) կին կը հիշվի Աղուտ գուստր Նաչմադինի, որ կանգնած է 1201-ին խաչքար-հիշատակարանը օժանդակությամբ (կամավորությամբ) իր և Սարգսի (Ա) դստեր Ռուզուքանա եւ վերջնույս ամուսին Միրիանա։ Նույն այս հիշատակարանին մեջ կը վկայվի. «Ես Աղուտս գուստրն Նաչմադինին, ամուսին Սարգսի և մայր Մամնայի ի նացա պակասման...»։ Շահինյան հոս հիշված «Մամնայի» մասին կըսե. «Սարգիս Համազասպյանց բացի Սմբատ որդուց ունեցել է նաև երկու դուստրեր՝ Մամնա և Ռուզուքան, որոնցից առաջինը մահացել է հոր մահվան ժամանակներում» (էջ 88)։ Նախ խնդիր է թե «Մամնային» ճիշտ կարդացվա՞ծ է խաչքար հիշատակարանին վրա։ 1201-ի հիշատակարանին մեջ ինչո՞ւ չի հիշվիր Սարգիս Ա-ի որդին Սմբատ, իր հոր միակ որդին, մինչ կը հիշվին քույրն ու փեսան։

Շահինյան միակ որդի մը դիտե Սարգիս Ա-ի։ Սակայն Սանահինի 1211-ի արձանագրության մեջ կը հիշվի Մարծպան (Ա) այսպես. «... Ես Մարծպան, որդի Սարգսի, թոռն աւագ Համազասպանց»։ Նույն հիշատակարանին մեջ Մարծպան կը հիշե «...իմ մաւրն Սթէ»։ (Պրոֆ. Կարո Ղաֆտդարյան կըսէ. «Սթէ անձնանվան մեջ կասկածելի կարող է լինել միայն վերջին է գիրը, որ միայն կիսով չափ է տեղում պահպանվել» (էջ 129)։ Արդյոք Սարգիս Ա երկու կին ուներ, Աղուտ (հիշված 1201-ին) և Սթէ (հիշված 1211-ին)։

Սանահինի 1215-ի արձանագրության մեջ Մարծպանի (Ա) հիշատակարանին (1215-էն) նման կը կարդանք. «Ի ՈԿԴ (1215) թվիս կանգնեցաւ խաչս յիշատակ Սարգսի, որդոյ Սմբատայ, թոռն Համազասպեանց, որ (Սարգիս) մեռաւ ի պատերազմի և թաղեցաւ ի դուռն Ա[ստուածա]ծնիս և որդի նորա Սմբատ եւ ամուսինն Աղուտ...»։ Ըստ իս հոս հիշված Աղուտը Սմբատի կինն է։ Ասիկա կը հաստատվի Բարձրաքաշի վանքին մեկ արձանագրությամբ, ուր Սմբատի երկու որդիները կը հիշեն «...զանդարձ ծնողաց մերոց...» մասին և Դ. օր պատարագ կորոշեն՝ «...Բ (2) Նրճսին (հարցական կը նկատեմ) և Բ (2) Աղուտին»։ ՆՐՃՍԻՆ անիմաստ է և գուցե սխալ ընթերցված։

Մենք շատ հավանական կը նկատենք, որ Սարգիս Ա ունեցած է նախ Սթե անուն կին, որմէ ծնած են Սմբատ և Մարծպան (Ա)։ Հետո կերևի Սթե մահացած ըլլալով Սարգիս Ա ամուսնացած է Աղուտին հետ, որմե ունեցած է «Մամնա» (հարցական) և Ռուզուքան (ամուսինը՝ Միրիան)։ Սարգիս Ա-ին որդին Սմբատ Բ կերևա թե ամուսնացած էր երկրորդ Աղուտի մը հետ, որմէ ունեցած էր Համլիկ և Սադուն, որոնք, ինչպես ըսի, Բարձրաքաշի արձանագրության մեջ կը հիշեն իրենց մայրը՝ Աղուտ։ Սարգիս Ա-ի երկրորդ որդին Մարծպան Ա ամուսնացած էր Մամքանի հետ, որմէ ծանոթ են չորս որդիներ և երկու դուստրեր։

Ավելորդ է հոս ավելի երկարել։ Սակայն կուզենք ընել ինչ որ ճշտումներ Շահինյանի Համազասպյան-Մամիկոնյան տոհմին ճյուղագրության վրա որ կը ներկայացվի այսպես.

ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱԾՊԱՆ
|
ՍՄԲԱՏ
|
ՔՈՒՐԴ (կ. Խորիշահ) ՀԱՍԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԳԻՍ (կ. Աղուտ)

ԱՍԼԱՆ ԲԵԿ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԾՊԱՆ ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏ Մամնա Ռուզուքան
|
ՀԱՄԼԻԿ

Հայտնի չէ թե ինչ հիմերու վրա կազմված է այս ճյուղագրությունը, որուն դեմ են ծանոթ արձանագրությունները։ Ըստ մեր ուսումնասիրության՝ արձանագրությունները կը ներկայացնեն այսպիսի ճյուղագրություն.

ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱՐԾՊԱՆ
|
ՍՄԲԱՏ (Ա)
|
ՔՈՒՐԴ (կ. Խորիշահ) ՀԱՍԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ(Բ) ՍԱՐԳԻՍ(Ա)

կին Ա՝ ՍԲԵԷ կին Բ՝ ԱՂՈՒՏ

Մամնա Ռուզուքան

ՍԵՎԱԴԻ ՄԱՐԾՊԱՆ Ա ՍՄԲԱՏ Բ կ. Աղուտ ՄԱՐԾՊԱՆ Բ՝

ՀԱՄԼԻԿ ՍԱԴՈՒՆ

ԱՍԼԱՆ ԲԵԿ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳԻՍ ԱՄԻՐԱ

Շահինյան կուտա երկրորդ ճյուղագրություն մըն ալ այսպէս.

ՀԱՄԱԶԱՍՊ
|
ՍԱՐԳԻՍ
|
ՄԱՐԾՊԱՆ 1221 թ., ամուսինը՝ ՄԱՄՔԱՆ,
|
ԱՇՈՏ. ԳՐԻԳՈՐ
|
ԳԱՒՐՔ=ԳԵՒՈՐՔ
|
ԱՇՈՏ

Շահինյանի այս ճյուղագրությունը բոլորովին թնճուկ մը կերեվի ինծի։ Մանավանդ հաճախ կրկնվող նման անունները չեն պարզված և լոկ Համազասպ, Մարգիս, Մարծպան ըսելով բավականացած է։ Սակայն այդ ալ անցնինք և կանգ առնենք Աշոտ, Գաւրգ Աշոտի մասին որոնք Համազասպյան-Մամիկոնյան գերդաստանին կամ տոհմին անդամ նշանակած կերեվա ըստ ճյուղագրության։

Արդարև 1246-ի արձանագրության մեջ կը հիշվին «...Ասլանպէկա և Գրիգորո, Համլկա և Աշոտո...»։ Հոս հիշված այս Աշոտը չի պատկանիր Համազասպյան-Մամիկոնյանց տոհմին և առ առավելն խնամիական կապով մը կրնա կապված ըլլալ։ Այս նույն Աշոտն է, որ Բարձրաքաշի ժամատան արևելյան պատին արձանագրության մեջ կը հիշվի այսպես. «...ես Աշոտ որդի Գավռգէ թոռն Աշոտի...», որոշ կերպով կապ մը ցույց չի տար Համազասպյան-Մամիկոնյան տոհմին հետ և պարզապես մեկենասությամբ գործակցած ըլլալով կը հիշվին այս արձանագրությանց մեջ։ («...ես Աշոտ որդի Գաւռգէ թոռն Աշոտի եւ Գրիգոր որդի Մարծպանա շինեցաք զՓայտաշէնն զկէսն մեր և կէսն նմա...», այսինքն Գրիգորի որդվո Մարծպանա։

Համազասպյան-Մամիկոնյաններու տոհմին մասին պատրաստ է արդեն վերախմբագրյալ աշխատություն մը որ շուտով կը հրատարակվի։ Նկատելով որ այդ մասին կատարած վերջին աշխատությանս հրատարակությունը պարզ ու մեկին չէր և շփոթության տեղի կուտա, մեր նոր աշխատությունը ավելի հստակ, պարզաբանված և նորագյուտ նյութերով հարստացած պիտի ըլլայ։

Հ. ՔՅՈՒՐՏՅԱՆ